համար էր որ Թերեւս շինած է Վաղարշակերտ, ուր միջոց մի մնայ և այս ոնի վերայ հսկէ, որպէս զի իւր ներկայութեամբ յարգանք դանէ ընդհանուր Հայոց ուխտատեղին, վասն որոյ և Զամչեան պատմագիրներէ առնելով կը հաստատէ «Այս Վաղարշ թագաւոր բաց ի բազմաղիմի շինութեանց և գործոց կարգեաց և ս ոն աշխարհախումբ ժողովրդոց իսկզբան տարւոյն հայոց յառաջնումն աւուր ամենանն Նաւասարդի ի պատիւ Արամազդայ հօր չաստուածոց ի դերեզման հօրեղբօր իւրոյ Պաժանայ քրմապետի բաղնացն աւանի, որ և կոչի Բագաւան և դիցն աւան ի Բագրեւանդ գաւառի, ուր շինեալ էր հօր իւրոյ Տիգրանայ վերջնոյ Բազինս, որոյ փոխան յետոյ կարգեցաւ ի Հայս ոն Յովհաննու Կարապետի և Աթանագինեայ վկայի։ Շինեաց անդ Վաղարշ նաև զայլ տեղի բնակութեան, և զարդարեաց զերկիրն յորմէ և . . . Բագրեւանդայ կոչեցաւ և ս և Վաղարշակերտ, որ այժմ Ալաշկերտ ասի»։

Այժմեան Թօփրաղ-գալէի աւերակներն, ջրուղիներն և աւանդութիւնը և ս ցոյց կը տան որ աշխարհաշէն մեծ մարդու գործ է, և է բուն Վաղարշակերտն, որ ժողովուրդն բուն իսկ աւանին Ալաշկերտ կասէ շատ անգամ։ Այժմեան աւերակաց բեկորներն ցոյց կտան որ մօտաւորապէս 10,000 տուն շինութիւն եղած է։

Բերդէս $^1/_2$ ժամ արեւելեան հիւսիս, $^1/_2$ ժամ յարեւմուտս մինչև Խանումի աղբիւրն աւերակաց կոյտեր և հետքեր յայտնի կերեւին։ Խանումի աղբիւրի մօտ սակաւ ինչ բարձրութեան մի վերայ մեծ շինութիւններու աւերակներ կան «Անբրներ» անուամբ, որ ըստ աւանդութեան ի հնումն քաղաքիս ամբարանոցն եղած է։